«Քո վճարումները տանում են Դուբայ»
խաղարկության անցկացման և մասնակցության կանոններ

1. Mastercard-ի հետ համատեղ անցկացվող արշավին կարող են մասնակցել Բիբլոս Բանկ Արմենիայի բոլոր World Elite Mastercard քարտապանները:

2. Հաղթող ճանաչված հաճախորդը կստանա հինգօրյա ուղեգիր դեպի Դուբայ՝ նախատեսված 2 անձի համար՝ ներառյալ տոմսերի և հյուրանոցի արժեքը:

3. Ակցիայի շրջանակում հաղթողը կորոշվի պատահականության սկզբունքով՝ ուղիղ եթերում անցկացվող խաղարկության միջոցով, որը կկազմակերպվի McCann Erickson գովազդային ընկերության կողմից:

4. Խաղարկությանը կարող են մասնակցել World Elite Mastercard քարտապան հանդիսացող այն հաճախորդները, որոնք հոկտեմբերի 1-ից մինչև նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում իրենց World Elite Mastercard քարտով կկատարեն 5 կամ ավելի գործարք՝ ընդհանուր առմամբ 500,000 ՀՀ դրամ (համարժեք արտարժույթ) և ավելի գումարի չափով POS և ePOS տերմինալներով:

5. Ակցիայի շրջանակում վճարային գործարք կհամարվի քարտով առևտրի սպասարկման կետերում կատարված վճարումները՝ բացառությամբ հեռախաղորդակցման ծառայությունների, կոմունալ վճարումների, էլեկտրոնային փողերի, պետական մարմիններին վճարումների (ինչպիսիք են՝ հարկեր, տուրքեր և այլ վճարումներ), բարեգործական հանգանակությունների, գործարքների, որոնց գծով կատարվել է գործարքի հետվերադարձ, խաղադրույքների, բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների, քարտից քարտ փոխանցվող գումարների դիմաց կատարված վճարումների:

6. Խաղարկության մասնակից չեն կարող հանդիսանալ.

- Ակցիայի ընթացքում Բիբլոս Բանկ Արմենիայի գործող աշխատակիցները
- 18 (տասնութ) տարին չլրացած հաճախորդները
- Մինչև ակցիայի ավարտը փակված World Elite Mastercard քարտերի քարտապանները

7. Արդյունքներն ամփոփվելու են 2024 թ. դեկտեմբերի սկզբին Բանկի պաշտոնական ֆեյսբուքյան էջում ուղիղ հեռարձակման միջոցով:

8. Խաղարկության հստակ օրվա և ժամի մասին հավելյալ կհայտարարվի Բանկի պաշտոնական ֆեյսբուքյան էջում:

9. Հաղթող կճանաչվի այն հաճախորդը, որի անուն- ազգանունը պատակահանության սկզբունքով դուրս կբերվի խաղարկության ընթացքում, և այդ պահին կհրապարակվի հաղթող ճանաչված մասնակցի քարտի վերջին երեք նիշն ու անուն-ազգանվան առաջին տառերը:

10. Հաղթողի ընտրությունից հետո պատահականության սկզբունքով կընտրվի ևս երկու մասնակից, որոնք կստանան մրցանակի հավակնորդի կարգավիճակ ու կստանան հաղթող ճանաչվելու և մրցանակը ստանալու իրավունք այն դեպքում, եթե հիմնական հաղթողը խաղարկությունից հետո 7 օրվա ընթացքում հրաժարվի Դուբայ մեկնելուց:

11. Հաղթող ճանաչված հաճախորդի տվյալները կհրապարակվեն Բիբլոս Բանկ Արմենիայի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում:

12. Մրցանակը ստանալու համար հաղթող մասնակիցը պետք է անձը հաստատող փաստաթղթով մոտենա Բիբլոս Բանկ Արմենիայի գլխամասային գրասենյակ (հասցե՝ ք.Երևան, Ամիրյան 18/3):

13. Հաղթող անձը պետք է հաստատի իր՝ մրցանակը ստանալու և Դուբայ մեկնելու պատրաստակամությունը խաղարկությունից հետո 7 օրվա ընթացքում և պետք է մոտենա տուրիստական ընկերություն մինչև դեկտեմբերի 20-ն ու ընտրի ուղևորության համար իրեն հարմար օրերը (5 օր՝ 2025 թ. մարտ կամ ապրիլ ամիսներին): Այն դեպքում, երբ Հաղթողը հրաժարվում կամ չի կարողանում մեկնել, մրցանակն անցնում է մրցանակի իրավունք ստացած հաջորդ մասնակցին և այդպես շարունակ:

14. Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ պաշտոնապես հրապարակելուց հետո: